ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2025-9-4-Ա

ք. Երևան 24.11.2025թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2025 թվականի նոյեմբերի 24-ի նիստում քննարկեց 2025 թվականի ապրիլի 15-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված «MINISO (Hengqin) Enterprise Management Co., Ltd.» ընկերության (Room 1402, Office Building No. 191, Rongzhu Avenue, Hengqin New District, Zhuhai City Guangdong Province, CN) «MINGO» (IR1760464) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «Mangoo» (Թերեզա Խաչատուրի Հակոբյան ՀՀ, Երևան, Ազատության պող., շ. 11Ա, բն. 50, N 35259) և միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «MANGO» (CONSOLIDATED ARTISTS B.V. Lijnbaan 81 NL-3012 EM Rotterdam (NL), IR 787301) շփոթելու աստիճան նման բառային և համակցված ապրանքային նշանների առկայության պատճառով: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշման «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 119-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերով և 122-րդ կետով սահմանված հիմքերով բառային ապրանքային նշաններին նման են համարվում բառային ապրանքային նշանները, որոնք ունեն ձայնային նմանություն, որոնց նմանությունը որոշվել է ձայնային հատկանիշներով, համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր: Համեմատվող ապրանքային նշանները զուգորդվում են միմյանց հետ իրենց հնչողությամբ: Չնայած համեմատվող

ապրանքային նշանների սկզբնամասերը տարբերվում են միմյանցից մեկ հնչյունով («mang» և «ming»), այնուամենայնիվ դրանք ունեն ձայնային նմանություն և տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի մոտ կարող է պատկերացում առաջանալ մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որի հետ ինքն արդեն առնչվել է: Ինչ վերաբերում է Ձեր կողմից ներկայացված փաստարկներին առ այն, որ հայտարկված ապրանքային նշանը թեև հայտարկվել է սև տառերով, սակայն օգտագործվում է կանաչ և կապույտ գունային համակցությամբ, ապա հարկ ենք համարում նշել, որ փորձաքննության արդյունքները վերաբերում են հայտարկված բառային ապրանքային նշանին, այլ ոչ թե նրան ինչպես այն օգտագործվում է, իսկ օգտագործվող համակցված ապրանքային նշանը կարող է ձևակերպվել որպես առանձին հայտ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ շփոթելու աստիճան նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույն կամ նույնատիպ լինելը սպառողների մոտ շփոթություն առաջացնելու հավանականություն է պարունակում: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «Mangoo» (Թերեզա Խաչատուրի Հակոբյան ՀՀ, Երևան, Ազատության պող., շ. 11Ա, բն. 50, N 35259) և միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «MANGO» (CONSOLIDATED ARTISTS B.V. Lijnbaan 81 NL-3012 EM Rotterdam (NL), IR 787301) շփոթելու աստիճան նման բառային և համակցված ապրանքային նշանների առկայության պատճառով:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կրկնական փորձաքննության արդյունքում կայացված որոշումը իրավաչափ է:

Բողոքարկողի ներկայացուցիչը պատշաճ ծանուցվել էր, սակայն ներկա չէր նիստին:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված «MINISO (Hengqin) Enterprise Management Co., Ltd.» ընկերության «MINGO» (IR1760464) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ